Սեպտ. 22ին կը մեկնին Իզմիրէն ու հանդիպելով Մահալըճ, Ուլպատ, Պաչքօյ՝ Հոկտ. 8ին, շաբաթ, կը մտնեն Պուրսա և հոն կը մնան մինչև **1682** Մարտ 1 (Թղ. 4բ-9բ)։

Մարտ 1ին կը մեկնին Պուրսայէն ու հանդիպելով Մուտանիա և Պօրղազ՝ Մարտ 4ին կը հասնին Ըստամպօլ և կ'իջեւանին Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցին (Թղ. 9բ-10ա)։

Մարտ 4էն Յունիս 14՝ Կ. Պոլիս (Թղ. 10ա-15բ)։

Յունիս 15ին կը մեկնին Կ. Պոլսոյ Նեղուցէն (Պօղազ) նաւով և 26ին կը հասնին Տրապիզոն՝ հանդիպելով Նիոյպօլիս, Սընապ, Կիւասուն, Ջէֆուէ իլիման, Թիրիպօլի և Էլէվու իսքէլէսի (Թղ. 16ա-16բ)։

Յունիս 26էն Յուլիս 3՝ Տրապիզոն (Թղ. 16բ-17ա)։

Յուլիս 3ին կը մեկնին Տրապիզոնէն ու հանդիպելով Ուչքիլիսէ, Ագահպաշի, Էկրիսուն, Ղըթօլա, Բաբերդի Վահանաշէն վանքը, Բաբերդ, Քէսիկքօփրի, Զաւուշխրան, Ղարասու և Կէզ՝ Յուլիս 14ին, ուրբաթ, կը հասնին Էրզրում, ուր կը մնան մինչև Օգոստ. 1 (Թղ. 17բ-20ա)։ Այստեղ կ'ընդհատի **Օրագրութիւնը**, բայց յետոյ կը յիշատակուի թէ Եղիազար կաթ. 1682 Օգոս. 25ին (Թղ. 69բ) կամ 27ին (Թղ. 124ա) մտած է Էջմիածին։ Ապա կը սկսի Սեպտ. 15էն։

Սեպտ. 15էն Նոյ. 7 Էջմիածին ու Երևան (Թղ. 21ա-21բ)։

Նոյ. 7ին Ամդեցի իբրև Նուիրակ Էջմիածնի կ'ուղևորի Եւդոկիա, հանդիպելով Շահրիար, Սուրմէլի. Կողբ, Երասխ գետ (անցք), Քերց, Կաղզւան, Ղարայպաղ, Ղզլճան, Ջիթահանք, Առուճապրակ, Դոմայձոր, Պատժաւան և Բասենոյ վանք, և Նոյ. 16ին Էրզրում, ուր կը մնայ մինչև **1683** Յունուար 18 (Թղ. 20բ-28ա)։

Յունուար 18ին կը մեկնի Էրզրումէն. կը հանդիպի՝ Իլիճա, Ճինիս, Աշղալա, Թօփալչաւուշ, Շօղայխան, Զավուշքօյ կամ Ղարաղուլի, Լօռի, Օրուճօղլի, Սօքման, Կարմրի, Սառջալար, Փոքր Տիքմէ, Մեծ Տիքմէ, Ղուսղունդայա, Կօկ, Տէվրէնտ, Մէնգիլքօյ, Ղափլիղայա, Ղզըլ Տէվրէնտ, Ջաղափոյ խան, Ածպտեր, Փոքր Ածպտեր, Քրթանոց, Կէտակէտուկ, Ղօյլասար, Հաճի Մուրատ ղալասի, Մուտասին, Ալմուսա, Ղզըլեօխուշ և Փետր. 6ին կը մտնէ Թօխաթ (Թղ. 28ա-29բ)։

Փետրուար 6էն մինչև **1684** Յունուար 17 կը մնայ Եւդոկիա։ Այդ ժամանակամիջոցին կ'այցելէ Մարսուան, Ամասիա, Զիլէ և շրջակայ վայրերը. անցած տեղերն են՝ Ղարա-